

**«ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ
ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ» ԾՐԱԳԻՐ-
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

**ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՅԵՌԱՑՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
I ՓՈՒԼ**

I ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաք և Լեռնամերձ, Ամբերդ,
Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահունյան, Շահունյան ԹՖ, Մուսալեռ,
Նորակերտ, Հուշակերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն,
Պտղունք գյուղեր



Բովանդակություն

1. Սոցիոլոգիական հետազոտություն	4
1.1 Ծրագրի տարածքում բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը	4
1.2 Հարցման մեթոդը և ընտրանքը	4
1.3 Հարցվածների սեռատարիքային կազմը և տնային տնտեսությունների բնութագիրը	4
1.4 Տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրները	5
1.5 Տնային տնտեսություններում սանիտարական պայմանների առկայությունը	6
1.6 Ջրամատակարարման առկա իրավիճակի գնահատում	6
1.6.1 Տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը	6
1.6.2 Տնային տնտեսությունների միջին օրական ջրամատակարարման տևողությունը	8
1.6.3 Բավարարվածությունը ջրամատակարարման տևողությունից և որակից	10
1.7 Խմելու ջրի հետ կապված հիվանդությունները	12
1.8 Կանանց հիմնախնդիրները, կապված ջրամատակարարման հետ	13
1.8.1 Տնային տնտեսություններում խմելու ջրի ապահովումը	13
1.8.2 Խմելու ջրի օգտագործման հիմնական նպատակները	14
1.9 Օգտագործված ջրի դիմաց վճարումները	14
1.9.1 Օգտագործված ջրի վարձի վճարման հաճախականությունը	14
1.9.2 Օգտագործված ջրի վարձի չափը	15
1.9.3 Հանրային ծառայությունների համար վճարումները	17
1.10 Օգտագործված ջրաքանակի հաշվառման համակարգի նկատմամբ վերաբերմունքը	17
1.11 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավմանն ու աջակցությանն ուղղված գործունեությունից տեղեկացվածություն և համագործակցություն ՀՋԿ-ի հետ	18
1.11.1 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների տեղեկացվածությունը սպասարկման բարելավման աջակցության գործունեությունից	18
1.11.2 Համագործակցություն ՀՋԿ ՓԲԸ-ի հետ	18
1.12 Սոցիոլոգիական գեոդերային հարցումների վերլուծության արդյունքները	19
<i>Հավելված 1. Սոցիոլոգիական հարցման ստուգաթերթիկ</i>	<i>20</i>
<i>Հավելված 2. Նկարներ սոցիոլոգիական և գեոդերային հարցումների, քննարկումների</i>	<i>23</i>

Աղյուսակ 1. Սեռատարիքային կազմ	5
Աղյուսակ 2. Համայնքներում տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը, տոկոսներով	7
Աղյուսակ 3. Տնային Տնտեսություններում միջին օրական ջրամատակարարման տևողությունը, տոկոսներով	8
Աղյուսակ 4. . Արդյո՞ք Ձեզ բավարարում են ջրամատակարարման	10
Աղյուսակ 5. Արդյո՞ք Ձեզ բավարարում է մատակարարվող ջրի որակը.....	11
Աղյուսակ 6. Համայնքների տնային տնտեսությունների բավարարվածության գնահատականը մատակարարման ջրի որակից	11
Աղյուսակ 7. Վերջին տարիներին Ձեր ընտանիքում եղել են արդյո՞ք ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքեր.....	12
Աղյուսակ 8. Անհրաժեշտության դեպքում տնային տնտեսությունում	14
Աղյուսակ 9. Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտագործում խմելու ջուրը.....	14
Աղյուսակ 10. Ի՞նչ հաճախականությամբ եք վճարում ջրի վարձը.....	15
Աղյուսակ 11. Սպառված ջրի դիմաց վճարումները ամռան և ձմռան ամիսներին.....	15
Աղյուսակ 12. Ո՞ր ծառայությունների համար ավելի շատ եք վճարում.....	17
Աղյուսակ 13. Տեղյակ եք արդյո՞ք ՀԳՇ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավման և աջակցության գործունեությունից.....	18
Աղյուսակ 14. Համագործակցությունը ՀԳՎ-ի հետ	18
Աղյուսակ 15. Կցանկանալի՞ք համագործակցել հետագայում.....	19
Գրաֆիկ 1.....	5
Գրաֆիկ 2.....	6
Գրաֆիկ 3.....	16
Գրաֆիկ 4.....	16
Գրաֆիկ 5.....	16

1. Սոցիոլոգիական հետազոտություն

1.1 Ծրագրի տարածքում բնակչության սոցիալ-ժողովրդագրական նկարագիրը

Ծրագրում ընդգրկված են Արմավիրի մարզի Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դողս, Շահունյան, Շահունյան ԹՖ, Մուսալեռ, Նորակերտ, Աղավնատուն, Պտղունք և Արագածոտն մարզի Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական գյուղական համայնքները:

2012թվականի հունվարի 1-ի դրությամբ ծրագրում ընդգրկված Արմավիրի մարզի տարածքի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 22202 մարդ, առկա բնակչության թիվը՝ 20066, որից 10695–ը կանայք են: Ծրագրի Արմավիրի մարզի տարածքում տնային տնտեսությունների թիվը 4506 է, որից առկա է 4241-ը: Տվյալ տարածքում դիտարկվում են բնական աճի միտումներ, քանի որ 2012թ. տվյալներով ծնունդը 78 մարդով գերազանցել է մահվան դեպքերին: Ծնվածների թվաքանակը կազմել է 215 մարդ, իսկ մահացածները՝ 137 մարդ:

2012թվականի հունվարի 1-ի դրությամբ ծրագրում ընդգրկված Արագածոտն մարզի բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 11699 մարդ, առկա բնակչության թիվը՝ 11569, որից 5864–ը կանայք են: Տնային տնտեսությունների թիվը 3392 է, որից առկա է 3318-ը: Տվյալ տարածքում դիտարկվում են բնական աճի միտումներ, քանի որ 2012թ. տվյալներով ծնունդը 43 մարդով գերազանցել է մահվան դեպքերին: Ծնվածների թվաքանակը կազմել է 136 մարդ, իսկ մահացածները՝ 93 մարդ:

Ներկայացված տեղեկատվությունը՝ վիճակագրական տվյալները, ստացվել է գյուղական համայնքների ղեկավարների կողմից:

1.2 Հարցման մեթոդը և ընտրանքը

Հետազոտության համար կիրառվել է պատահական ընտրանքի ձևը, որի միջոցով գլխավոր համակցությունից ընտրանքում ապահովվել է յուրաքանչյուր տնային տնտեսության ընդգրկման համար հավասար հավանականություն: Ելնելով այդ սկզբունքից՝ 14 համայնքների առկա 7559 տնային տնտեսություններից հարցման ընտրանքը կազմել է 234 տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների շրջանում տվյալները հավաքվել են հատուկ մշակված հարցաթերթիկի միջոցով: Հարցաթերթիկը կցվում է Հավելված 1-ում:

1.3 Հարցվածների սեռատարիքային կազմը և տնային տնտեսությունների բնութագիրը

Տնային տնտեսություններում հարցման մասնակիցների 54.7%-ը ներկայացնում էր 41-60տ, 22.2%-ը՝ 61տ և բարձր, 19.2%-ը՝ 26-40տ, և 3.9%-ը՝ 18-25տ: Նրանցից 38.0% –ը տղամարդիկ են, 62.0%-ը՝ կանայք: Կանանց թվաքանակի գերակշռությունը հարցվող տղամարդկանց թվի նկատմամբ կարելի է բացատրել հարցման պահին տղամարդկանց զբաղվածության և այլ պատճառներով նրանց բացակայության և տվյալ տարածաշրջանում կանանց գերակշռության հանգամանքներով: Նշենք նաև, որ կանայք կենցաղի և սանիտարահիգիենիկ կարիքների հետ կապված հարցերում ավելի հաճախ են առնչվում

խմելու ջրի խնդիրների հետ: Սեռատարիքային կազմը կարելի է տեսնել ստորև ներկայացված Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Սեռատարիքային կազմ


Սեռ	Տարիք			
	18-25	26-40	41-60	60-և ավելի
Արական	33.3%	33.3%	36.0%	48.1%
Իգական	66.7%	66.7%	64.0%	51.9%

Հետազոտության ընտրանքում ընդգրկված 234 տնային տնտեսությունների անդամների թվաքանակը կազմել է 1103 մարդ, որից 39.0%-ը կանայք են, 35.7% -ը՝ տղամարդիկ, իսկ 25.3%-ը՝ մինչև 18 տարեկան անչափահասներ: Այսինքն՝ ընտրանքում ընդգրկված տնտեսություններից յուրաքանչյուրում միջին հաշվով առկա է 1.2 անչափահաս, իսկ չափահասների շրջանում կանայք կազմել են 52.2%: Միաժամանակ հարկ է նշել, որ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների 42.3%-ում երեխաներ չկային: Ընտրանքում ընդգրկված ընտանիքների անդամների թիվը միջինում կազմել է 4.7 մարդ:

1.4 Տնային տնտեսությունների եկամտի հիմնական աղբյուրները

Հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների 21.4%-ը որպես եկամտի հիմնական աղբյուր համարել են պետական և համայնքային աշխատանքի դիմաց վարձատրությունը, 67.1%-ը՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված եկամուտները, 52.6%-ը՝ կենսաթոշակը և նպաստները, 28.2%-ը՝ մասնավոր գործունեությունից ստացված եկամուտները, 13.7%-ը՝ արտասահմանից ստացված աջակցությունը, 8.5%-ը՝ արտագնա աշխատանքից ստացված եկամուտները և 5.5%-ը՝ այլ կարգի աջակցությունը: Որն է հանդիսանում հարցվողների հիմնական եկամտի աղբյուրը, կարելի է տեսնել Գրաֆիկ 1-ում:


Գրաֆիկ 1



Հարցման մասնակիցների շրջանում հավաքված տվյալները հնարավորություն են տալիս մոտավոր պատկերացում կազմելու տնային տնտեսությունների միջին ամսական եկամուտների մասին: Տնտեսությունների 2.6%-ի միջին ամսական եկամուտը կազմել է 1 ենթաձրագիր–Աշխատանքային նախագիծ

մինչև 32հազ. դրամ, 12.4%-ինը՝ 33-50հազ.դրամ, 25.2%-ինը՝ 51-100հազ.դրամ, 59.8%-ինը՝ 101հազ.դրամից բարձր: Հարցվողների ընտանիքների մոտավոր միջին ամսական եկամուտների չափի մասին կարելի է տեսնել Գրաֆիկ 2-ում:

Գրաֆիկ 2



1.5 Տնային տնտեսություններում սանիտարական պայմանների առկայությունը

Ենթաձրագրում ընդգրկված համայնքներում կոյուղու համակարգը բացակայում է կամ էլ նախկինում եղածը չի գործում / գ.Սուսալեռ, գ.Նորակերտ, գ.Շահունյան, Շահունյան ԹՖ, գ.Պտղունք, գ.Օշական/: Բնակիչները օգտվում են բակային զուգարաններից կամ ունեն սանհանգույցներ, որոնք միացված են սեփական տարածքում կառուցված կեղտաջրերի հավաքման հորերին:

Ըստ սանիտարական պայմանների առկայության՝ տնային տնտեսությունների 100%–ը ունի զուգարան: Ըստ հարցման արդյունքների՝ բնակչության 84.6%–ի զուգարանները գտնվում են դրսում/տան բակում, իսկ 23.5%–ի զուգարանները գտնվում են բնակարանում կամ տան ներսում, սակայն ոչ նորմալ ջրամատակարարման հետևանքով առկա էին սանիտարահիգիենիկ խնդիրներ: Տնային տնտեսությունների 76.5%-ում լրգարան/ցնցուղը բացակայում է: Այդ վիճակը հարցվողները պայմանավորում էին ջրամատակարարման բացակայությամբ: Շահունյան, Նորակերտ, Պտղունք բազմաբնակարան շենքերում հարցման մասնակիցները բողոքում էին կոյուղու անմիխիթար վիճակից.

- **գ.Պտղունք** - «կոյուղու ջրերը բաց վիճակում հոսում են, լցվում մարդկանց հողատարածքներ, միանում են ոռոգման ջրերին, գոնե մեկ հոր սարքեին»
- **գ, Շահունյան** – «կոյուղու ջրերը անցնում են շենքերի տակ»
- **Շահունյան ԹՖ** – «կոյուղու համակարգը իրենց՝ շենքի բնակիչների, ուժերով են կառուցել »:

1.6 Ջրամատակարարման առկա իրավիճակի գնահատում

1.6.1 Տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը

Հետազոտության արդյունքներով՝ կենտրոնացված ջրամատակարարման համակարգից տնային միացման ձևով խմելու ջրից օգտվում էր հարցման մասնակից

տնային տնտեսությունների 71.8%-ը, բակային ծորակից՝ 48.7%-ը, փողոցի ծորակից՝ 3.8%-ը, սեփական ջրհորից՝ 2.0%-ը, հասարակական աղբյուրից /ջրհորից՝ 7.3%-ը, ջուրը գնում են՝ 4.3%-ը:

Ջրամատակարարման տնային միացման ձևից օգտվում էր Լեռնամերձ գյուղական համայնքի 75.0%-ը, Ամբերդի՝ 63.6%-ը, Այգեշատի՝ 91.7%-ը, Դաշտի՝ 90.0%-ը, Դոդսի՝ 60.0%-ը, Շահումյանի՝ 76.9%-ը, Շահումյան ԹՖ-ի՝ 66.7%-ը, Մուսալեռի՝ 54.2%-ը, Նորակերտի՝ 85.7%-ը, Աղավնատուն համայնքի՝ 70.8%-ը, Պտղունքի՝ 36.4%-ը, Ոսկեվազի՝ 91.4%-ը, Ոսկեհատի՝ 76.9%-ը, Օշականի՝ 57.6%-ը:

Բակային ծորակներից օգտվում էր Լեռնամերձ գյուղական համայնքի 25.0%-ը, Ամբերդի՝ 36.4%-ը, Այգեշատի՝ 66.7%-ը, Դաշտի՝ 40.0%-ը, Դոդսի՝ 50.0%-ը, Շահումյանի՝ 30.8%-ը, Շահումյան ԹՖ-ի՝ 33.3%-ը, Մուսալեռի՝ 66.7%-ը, Նորակերտի՝ 33.3%-ը, Աղավնատուն համայնքի՝ 45.8%-ը, Պտղունքի՝ 9.1%-ը, Ոսկեվազի՝ 60.0%-ը, Ոսկեհատի՝ 69.2%-ը, Օշականի՝ 57.6%-ը:

Փողոցային ծորակից օգտվում էր Ամբերդի գյուղական համայնքի տնային տնտեսությունների 27.3%-ը, Շահումյան ԹՖ-ի՝ 11.1%-ը, Մուսալեռի՝ 4.2%-ը, Նորակերտի՝ 4.8%-ը, Ոսկեվազի՝ 2.9%-ը, Օշականի՝ 6.1%-ը:

Ջրամատակարարման բացակայության պատճառով Մուսալեռ գյուղական համայնքի տնային տնտեսությունների 4.2%-ը, Նորակերտի՝ 4.8%-ը, Աղավնատուն համայնքի՝ 16.7%-ը, Պտղունքի՝ 9.1%-ը, Ոսկեհատի՝ 7.7%-ը, Օշականի՝ 18.2%-ը օգտվում են հասարակական ջրհոր/աղբյուրներից: Ջուրը գնում են Մուսալեռ գյուղական համայնքի տնային տնտեսությունների 16.7% -ը և Պտղունքի՝ 54.5%-ը:

Առանձին համայնքների և ընդհանուր ենթածրագրի տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքներում տնային տնտեսությունների խմելու ջրից օգտվելու ձևերը, տոկոսներով

	Համայնք	տնային միացում	բակային ծորակ	փողոցային ծորակ	սեփական ջրհոր	հասարակական ջրհոր/աղբյուր	ջուրը գնում են
1	Լեռնամերձ	75.5	25.0				
2	Ամբերդ	63.6	36.4	27.3			
3	Այգեշատ	91.7	66.7				
4	Դաշտ	90.0	40.0				
5	Դոդս	60.0	50.0				
6	Շահումյան	76.9	30.8				
7	Շահումյան ԹՖ	66.7	33.3	11.1			
8	Մուսալեռ	54.2	66.7	4.2	8.3	4.2	16.7
9	Նորակերտ	85.7	33.3	4.8		4.8	
10	Աղավնատուն	70.8	45.8			16.7	
11	Պտղունք	36.4	9.1			9.1	54.5
12	Ոսկեվազ	91.4	60.0	2.9			
13	Ոսկեհատ	76.9	69.2			7.7	
14	Օշական	57.6	57.6	6.1		18.2	
	Ընդհանուր ենթածրագրում	71.8	48.7	3.8	2.0	7.3	4.3

1.6.2 Տնային տնտեսությունների միջին օրական ջրամատակարարման տևողությունը

Ըստ հետազոտության տվյալների՝ ամռան ամիսներին ծրագրի տարածքի տնային տնտեսությունների 12.0%-ն ունեցել է միջին օրական ջրամատակարարում 0-4ժամ տևողությամբ, 9.4%-ը՝ 5-11ժամ, 12.8%-ը՝ 12-23ժամ, 53.8%-ը ունեցել է 24-ժամ, իսկ 17.1%-ը նշել է անկանոն կամ բոլորովին բացակայող ջրամատակարարում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ջրամատակարարման այդ պատկերը մի փոքր փոխվում է ձմռան ամիսներին: Համայնքների հարցվածների 8.5%-ն իրենց տնային տնտեսություններում ունեցել են ջրամատակարարում 0-4 ժամ տևողությամբ, 9.0%-ը՝ 5-11ժամ, 6.8%-ը՝ 12-23ժամ, 59.9%-ը՝ 24 ժամ, իսկ 15.8%-ը նշել է անկանոն կամ բոլորովին բացակայող ջրամատակարարում: Հետազոտությունը ցույց է տալիս, որ ձմռան ամիսներին, չնայած ջրամատակարարման համակարգերի ներքին ցանցերի քայքայված վիճակներին և վթարների առաջացմանը, ջրամատակարարումն իրականացվում է մի փոքր ավելի լավ, քան ամռան ամիսներին:

Հարցվածների 9.0%-ը ընդհանրապես ջրամատակարարում չի ունեցել, ջուրը գնել են, օգտվել են հարևաններից և հասարակական աղբյուրից:

Ընդհանուր ենթածրագրի տնային տնտեսություններում միջին օրական ջրամատակարարման տևողությունը ամռան և ձմեռվա ամիսներին՝ տոկոսային արտահայտությամբ են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Տնային Տնտեսություններում միջին օրական ջրամատակարարման տևողությունը, տոկոսներով

	Համայնք	Ամռային ամիսներին					Ձմեռային ամիսներին				
		0-4 ժամ	5-11 ժամ	12-23 ժամ	24 ժամ	այլ/ անկանոն, առանց ջրամատ.	0-4 ժամ	5-11 ժամ	12-23 ժամ	24 ժամ	այլ/ անկանոն, առանց ջրամատ.
1	Լեռնաներձ	37.5		12.5	50				50.0	50.0	
2	Ամբերդ				72.7	27.3				72.7	27.3
3	Այգեշատ				100					100	
4	Դաշտ				100					100	
5	Դողս				90	10				90	10
6	Շահումյան	7.7	15.4		46.2	53.9	7.7	15.4		46.2	46.2
7	Շահումյան ԹՖ	11.1	11.1		33.3	55.0	11.1		11.1	33.3	55.0
8	Մուսալեռ	29.2	20.8	29.2	16.7	16.7	29.2	20.8	25.0	20.8	8.3
9	Նորակերտ	28.6	28.6	23.8	14.3	4.8	28.6	28.6	23.8	14.3	4.8
10	Աղավնատուն	12.5	16.7	12.5	54.2	12.5	12.5	20.8	4.3	58.3	16.7
11	Պտղունք				54.5	45.5				54.6	45.5
12	Ոսկեվազ	5.7		17.1	71.4	11.4			2.9	88.6	8.6
13	Ոսկեհատ	7.7	7.7	46.2	38.5		7.7			92.3	
14	Օշական	9.1	9.1	6.1	57.6	21.2	3.0	9.1	3.0	63.6	21.2
	Ընդհանուր ենթածրագրում	12.0	9.4	12.8	53.8	17.1	8.5	9.0	6.8	59.9	15.8

Ըստ առանձին համայնքների, հարցման մասնակից տնային տնտեսությունների միջին օրական ջրամատակարարման տևողությունը ժամային խմբավորումներով ամառային և ձմեռային ամիսների համար պարզ երևում է աղյուսակում: Ջրամատակարարման տևողությունը առանձին համայնքներում այլ կերպ հետևյալ պատկերն ունի .

- **Ամբերդ** համայնքում ամռան և ձմռան ամիսներին 27.3%-ը՝ չունի ջրամատակարարում
- **Դողս** համայնքում ամռան և ձմռան ամիսներին 10.0% - ը՝ չունի ջրամատակարարում:
- **Շահումյան** համայնքում ամռան և ձմռան ամիսներին անկանոն ջրամատակարարում ունի 46.2%-ը: Ջրամատակարարումն հիմնականում իրականացվում է պոմպերի միջոցով
- **Շահումյան ԹՖ** համայնքում ամռան և ձմեռային ամիսներին 46.7%-ը ունեցել է անկանոն և շատ թույլ ջրամատակարարում, այն պոմպի միջոցով են ստացել, իսկ 8.3%-ը չունեն ջրամատակարարում
- **Մուսալեռ** համայնքում ամռան ամիսներին 29.2%-ը ունեցել է ջրամատակարարում 12-23 ժամ, ընդ որում ջրամատակարարումը տրվում է 2 օրը մեկ 24 ժամով, և 16.7.5%-ը՝ անկանոն: Տնային տնտեսությունների 8.3%-ը չունի ջրամատակարարում
- **Նորակերտ** համայնքում ջրամատակարարումը 38.0% տնային տնտեսություններում իրականացնում են պոմպի միջոցով, հավաքվում են բաքերի մեջ: Տնային տնտեսությունների 4.8%-ը չունի ջրամատակարարում
- **Աղավնատուն** համայնքում ձմռան ամիսներին 16.7%-ը ունեցել է անկանոն ջրամատակարարում: Ջրամատակարարումն հիմնականում իրականացվում է պոմպերի միջոցով: Տնային տնտեսությունների 12.5%-ը չունի ջրամատակարարում
- **Պտղունք** համայնքում ամռան և ձմռան ամիսներին տնային տնտեսությունների 9.1%-ը ունեցել է անկանոն ջրամատակարարում: Ընդ որում ջրամատակարարումը տնային տնտեսություններում իրականացնում են պոմպի միջոցով, հավաքվում են բաքերի մեջ: Տնային տնտեսությունների 45.5%-ը չունի ջրամատակարարում
- **Ոսկեվազ** համայնքում ամռան ամիսներին անկանոն ջրամատակարարում է ունեցել տնային տնտեսությունների 11.4%-ը, իսկ ձմռան ամիսներին՝ 8.6%-ը
- **Օշական** համայնքում տնային տնտեսությունների 21.2%-ը չունի ջրամատակարարում:

Ենթաօրագրում ընդգրկված համայնքներում ջրամատակարարման ներքին ցանցը ամբողջությամբ կամ մասնակիորեն քայքայված վիճակում է գտնվում: Այդ պատճառով հաճախ վթարներ են տեղի ունենում, ջրամատակարարումն անկանոն, ընդհատումներով է իրականացվում: Այդ պատկերը հստակորեն երևում է Աղյուսակ 3-ում: Հարցման մասնակիցների ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ ջրամատակարարման համակարգերի բարելավման, ներքին ցանցի վերանորոգման արդյունքում կանխատեսվում է ջրամատակարարման տևողության ավելացում, վթարների նվազում, ջրի քանակի ավելացում:

1.6.3 Բավարարվածությունը ջրամատակարարման տևողությունից և որակից

Ծրագրում ընդգրկված համայնքների տնային տնտեսությունների շրջանում հավաքված կարծիքներից կարելի է եզրակացնել, որ **ամռան ամիսներին** ջրամատակարարման ժամերից և տևողությունից նրանց 58.1%-ն արտահայտել են իրենց գոհունակությունը, 39.3%-ը բավարարված չէ ջրամատակարարման ժամերից և տևողությունից, ընդ որում նրանց 9.0%-ը ջրամատակարարում ընդհանրապես չի ունենում, իսկ 2.6%-ը դժվարացել են պատասխանել:

Ձմռան ամիսների համար ծրագրում ընդգրկված համայնքների տնային տնտեսությունների 65.0%-ն արտահայտել են իրենց գոհունակությունը, 32.4%-ը բավարարված չէ ջրամատակարարման ժամերից և տևողությունից, իսկ 2.6%-ը դժվարացել են պատասխանել:

Տնային տնտեսությունների բավարարվածությունը ջրամատակարարման ժամերից և տևողությունից տոկոսային արտահայտությամբ ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. . Արդյո՞ք Ձեզ բավարարում են ջրամատակարարման

	Այո	Ոչ	դժվարանում եմ պատասխանել
Ամառային ամիսներին	58.1%	39.3%	2.6%
Ձմեռային ամիսներին	65.0%	32.4%	2.6%

Առանձին համայնքների հարցման մասնակիցների բավարարվածությունը ջրամատակարարման ժամերից և տևողությունից ամառային և ձմեռային ամիսների համար հետևյալ կերպ է արտահայտվել.

- **Լեռնամերձ** համայնքի տնային տնտեսությունների 62.5%-ն **ամռան ամիսների** համար արտահայտել է իր բավարարվածությունը ջրամատակարարման ժամերից և տևողությունից, 37.5%-ը բավարարված չեն, **ձմռան ամիսների** համար պատասխանել են «այո» 87.5%-ը, «ոչ»՝ 12.5%-ը
- **Ամբերդ - ամռան և ձմռան** ամիսների համար պատասխանել են «այո»- 72.7%-ը, 27.3%-ը՝ «ոչ»
- **Այգեշատ , Դաշտ** - 100% -ը բավարարված են
- **Դողս** – ամռան և ձմռան ամիսների համար 90%-ը՝ «այո» , 10%-ը՝ «ոչ»
- **Շահումյան** - ամռան ամիսների համար 46.2%-ը՝ «այո», 46.2%-ը՝ «ոչ», ձմռան ամիսների համար 53.8%-ը՝ «այո», 38.5%-ը՝ «ոչ»: 7.7%-ը՝ «դժվարացել են պատասխանել»
- **Շահումյան ԹՖ** – ամռան ամիսների համար 11.1%-ը՝ «այո», 66.7%-ը՝ «ոչ», 22.2%-ը դժվարացել են պատասխանել, ձմռան ամիսների համար 44.4%-ը՝ «այո», 44.4%-ը՝ «ոչ», 11.1%-ը՝ «դժվարացել են պատասխանել»
- **Մուսալեռ** – **ամռան** ամիսների համար 12.5%-ը՝ «այո» , 83.3%-ը՝ «ոչ», 41.7%-ը՝ «դժվարացել է պատասխանել» , իսկ **ձմռան ամիսների** համար 16.7%-ը՝ «այո», 79.2%-ը՝ «ոչ», 4.2%-ը՝ դժվարացել են պատասխանել»
- **Նորակերտ** – ամռան և ձմռան ամիսների համար 28.6%-ը՝ «այո» և 71.4%-ը՝ «ոչ»

- **Աղավազներ** – **ամռան ամիսների** համար 50.0%-ը՝ «այո», 41.7%-ը՝ «ոչ», 8.3%-ը՝ «դժվարացել են պատասխանել», **ձմռան ամիսների** համար 54.2%-ը՝ «այո», 41.7%-ը՝ «ոչ», 4.2%-ը՝ «դժվարացել են պատասխանել»
- **Պտղուկ** - **ամռան և ձմռան ամիսների** համար 54.5%-ը՝ «այո» և 45.5% -ը՝ «ոչ»
- **Ոսկեվազ** - **ամռան ամիսների** համար 88.6%-ը՝ «այո», 11.4%-ը՝ «ոչ», **ձմռան ամիսների** համար 94.3%-ը՝ «այո», 2.9%-ը՝ «ոչ», 2.9%-ը՝ «դժվարացել են պատասխանել»
- **Ոսկեհատ** – **ամռան ամիսների** համար 46.2%-ը՝ «այո», 61.5%-ը՝ «ոչ», 2.6%-ը՝ «դժվարացել են պատասխանել», **ձմռան ամիսների** համար 76.9%-ը՝ «այո», 15.4%-ը՝ «ոչ», 7.7%-ը՝ «դժվարացել են պատասխանել»
- **Օշական** – **ամռան ամիսների** համար 60.6%-ը՝ «այո», 39.4%-ը՝ «ոչ», **ձմռան ամիսների** համար 69.7%-ը՝ «այո», 30.3%-ը՝ «ոչ»:

Ինչ վերաբերում է **ջրի որակին** տված գնահատականներին, ապա հարցվածների 37,1%-ը գնահատել է լավ՝ 4-5 ցուցանիշով: Հարցվածների 24.4%-ն իր դժգոհությունն է արտահայտել դրանից և այն գնահատել է վատ՝ 1-2 ցուցանիշ: Ըստ նրանց, մատակարարված ջուրը ունի համ, հոտ, ավազի նստվածք: Ըստ համայնքների բնակիչների քայքայված խողովակներով եկած ջրի հետ որդեր են գալիս, խողովակների մեջ ջուրը երկար մնալով հնանում է: Հաճախ ավազի, հողի, ժանգի մնացորդներով ջուր է գալիս: Անձևից հետո խողովակներով ցեխաջրեր են գալիս:

Հարցվածների 27.4%-ը՝ գնահատելով 3, ըստ էության նրանց բավարարել է մատակարարված ջրի որակը:

Հարցվածների 8.1%-ը դժվարացել են պատասխանել:

Տնային տնտեսություններին մատակարարված ջրի որակի գնահատականները տոկոսային արտահայտությամբ ներկայացված են Աղյուսակ 5 -ում:

Աղյուսակ 5. Արդյո՞ք Ձեզ բավարարում է մատակարարվող ջրի որակը

Մատակարարվող ջրի որակի ցուցանիշ՝ 1-ը ամենացածրն է, 5-ը՝ ամենաբարձրը					դժվարանում են պատասխանել
1	2	3	4	5	
10.3%	14.1%	27.4%	11.5%	25.6%	8.1%

Եթե տնային տնտեսություններին մատակարարված ջրի որակը գնահատելու լինենք որպես վատ՝ 1-2, բավարար՝ 3, լավ՝ 4-5 ցուցանիշներով, ապա ըստ համայնքների հարցվածների գնահատականի կստացվի հետևյալ պատկերը (ներկայացված Աղյուսակ 6-ում):

Աղյուսակ 6. Համայնքների տնային տնտեսությունների բավարարվածության գնահատականը մատակարարման ջրի որակից

	Համայնք	Հարցվածների գնահատականը, տոկոսներով			
		վատ	բավարար	լավ	դժվարանում են պատասխանել
1	Լեռնաներձ		37.5	62.5	
2	Ամբերդ	45,5	27.3	27.3	

3	Այգեչատ		8.3	91.7	
4	Դաշտ	10.0	20.0	50.0	20.0
5	Դողս	20.0	20	60.0	
6	Շահումյան	38.5	23.0	38.5	
7	Շահումյան ԹՖ	11.1	22.2	44.4	11.1
8	Մուսալեռ	50.0	29.2	12.5	4.3
9	Նորակերտ	6.7	42.9	33.3	
10	Աղավնատուն	16.7	33.3	37.5	4.2
11	Պտղունք	27.3	18.2	9.1	
12	Ոսկեվազ	25.7	25.7	28.6	20.0
13	Ոսկեհատ	30.8	30.8	38.4	
14	Օշական	18.2	27.3	36.3	21.2
Ընդհանուր ենթաձրագրում		24.4	27.4	37.1	8.1

Վատ գնահատականին են արժանացրել Մուսալեռ գյուղական համայնքի հարցվածների՝ 50.0%-ը, Ամբերդի՝ 45.5%-ը, Շահումյանի՝ 38.5%-ը, Ոսկեհատի՝ 30.8%-ը, Պտղունքի՝ 27.3%-ը, Ոսկեվազի՝ 25.7%-ը, Դողսի՝ 20.0%-ը, Օշականի՝ 18.2%-ը, Աղավնատան՝ 16.7%-ը, Շահումյան ԹՖ-ի 11.1%-ը, Դաշտի՝ 10.0%-ը, Նորակերտի՝ 6.7% -ը:

1.7 Խմելու ջրի հետ կապված հիվանդությունները

Հարցվածների շրջանում մտահոգության տեղիք են տալիս ջրի վատ որակի և դրա միջոցով փոխանցվող հիվանդությունների հարցերը: Ուսումնասիրվել է «Վերջին տարիներին Ձեր ընտանիքում եղե՞լ են արդյոք ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների գրանցման դեպքեր» հարցի պատասխանները:

Ամբողջ ենթաձրագրի հարցվածների 7.7%-ի ընտանիքներում պատահել են ստամոքսա-աղիքային հիվանդություններ, 88.9%-ում՝ հիվանդություններ չեն պատահել, իսկ 3.4%-ը դժվարացել են պատասխանել: Հիվանդություններից խուսափելու համար հարցման մասնակիցները նշել են, որ տնային տնտեսությունում խմելուց առաջ ջուրը եռացնում են:

Ըստ հարցման մասնակիցների ասածների, աղիքային հիվանդությունների դեպքեր են պատահել Մուսալեռ համայնքի տնային տնտեսությունների 20.8%-ում, Պտղունքի՝ 18.2%-ում, Դաշտի 12.5%-ում, Շահումյան ԹՖ-ի՝ 11.1%-ում, Դողսի՝ 10.0%-ում, Ամբերդի՝ 9.1%-ում, Օշականի՝ 6.1%-ում, Ոսկեվազի՝ 5.7%-ում: Ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների առաջացման դեպքերն ըստ առանձին համայնքների հարցվածների ներկայացման, կարող եք տեսնել Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Վերջին տարիներին Ձեր ընտանիքում եղել են արդյո՞ք ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքեր

	Համայնք	Հարցվածների ընտանիքում ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքեր, տոկոսներով		
		եղել են	չեն եղել	դժվարանում են պատասխանել
1	Լեռնաներձ		100	
2	Ամբերդ	9.1	72.7	18.2

	Համայնք	Հարցվածների ընտանիքում ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքեր, տոկոսներով		
		եղել են	չեն եղել	դժվարանում են պատասխանել
3	Այգեշատ		91.7	8.3
4	Դաշտ	12.5	87.5	
5	Դողս	10.0	90.0	
6	Շահումյան		100	
7	Շահումյան ԹՖ	11.1	88.9	
8	Մուսալեռ	20.8	75.0	4.2
9	Նորակերտ	4.8	95.2	
10	Աղավնատուն		100	
11	Պտղունք	18.2	81.8	
12	Ոսկեվազ	5.7	91.4	2.9
13	Ոսկեհատ	7.7	92.3	
14	Օշական	6.1	84.9	9.1
Ընդհանուր ենթաձրագրում		7.7	88.9	3.4

Ինչպես երևում է հարցման մասնակիցների հավաքված կարծիքներից, ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների դեպքերը համայնքների մի մասում բացակայում է, իսկ առաջացած հիվանդությունների դեպքերը՝ բացառությամբ մի քանի համայնքների (Մուսալեռ, Պտղունք, Շահումյան ԹՖ, Դաշտ, Դողս, Ամբերդ, Ոսկեհատ), թույլ են արտահայտված: Հիվանդությունների առաջացման դեպքերն անմիջականորեն կապված են մատակարարվող ջրի որակի հետ: Ջրամատակարարման ներքին ցանցի քայքայված վիճակի, հաճախակի վթարների և երկարատև ընդհատումների հետևանքով վատանում է մատակարարված ջրի որակը, որն էլ անկասկած կարող է ազդել ընտանիքի անդամների առողջության վրա: Հարցման մասնակիցները դրանով էլ պայմանավորում են առաջացած հիվանդությունների դեպքերը: Հիվանդություններից խուսափելու համար հարցման մասնակիցները վթարներից և ջրամատակարարման ընդհատումներից հետո ջուրը բաց են թողնում մաքրվելու համար: Պետք է նշել այն փաստը, որ հետազոտության ընտրանքում ընդգրկված հարցվածների մեծ մասն այդ հիվանդությունների ժամանակ չի ենթարկվել բժշկական ստուգման՝ այդ դեպքերը հաստատելու համար:

1.8 Կանանց հիմնախնդիրները, կապված ջրամատակարարման հետ

1.8.1 Տնային տնտեսություններում խմելու ջրի ապահովումը

Տնային տնտեսությունների շրջանում հավաքված կարծիքներից կարելի է եզրակացնել, որ տվյալ համայնքներում ոչ նորմալ ջրամատակարարման պայմաններում ծանր է հատկապես կանանց վիճակը: Հետազոտությունների տվյալները համայնքների հարցվածների շրջանում՝ «Անհրաժեշտության դեպքում տնային տնտեսությունում ովքե՞ր

են ջուրը կրում» հարցի վերաբերյալ, կարող եք տեսնել Աղյուսակ 8–ում: Հարցվածների 39.6%-ում կանայք ջուրը կրում են դուլներով:

Աղյուսակ 8. Անհրաժեշտության դեպքում տնային տնտեսությունում Համայնքների հարցվածների տվյալները, տոկոսներով

	Կանայք	Տղամարդիկ	Երեխաները	Բոլորը
Ընդհանուր ենթաձրագրում	39.6	9.6	3.2	15.0

Տնտեսությանը խմելու ջրով ապահովելու խնդիրը կանանցից խլում է մեծ ջանքեր և ժամանակ: Այսպես, հարցվածներից նշել են, որ խմելու ջուրը բերում են հարևանների մոտից, փողոցային և հասարակական աղբյուրներից 20մ-ից մինչև 250-500մ հեռավորությունից, իսկ տղամարդիկ ջուրն ավտոմոբիլներով բերում են ավելի մեծ հեռավորությունից:

1.8.2 Խմելու ջրի օգտագործման հիմնական նպատակները

Հետազոտության տվյալներն այդ հարցի վերաբերյալ ենթաշրջանի տնային տնտեսությունների հարցվածների շրջանում ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Ի՞նչ նպատակով եք հիմնականում օգտագործում խմելու ջուրը

Խմելու և խոհանոցի համար	Կենցաղային կարիքների համար	Ռոռզման համար	Անասնապահության համար	Այլ
95.7%	90.2%	0.8%	5.1%	-

1.9 Օգտագործված ջրի դիմաց վճարումները

1.9.1 Օգտագործված ջրի վարձի վճարման հաճախականությունը

«Վճարում ե՞ք արդյոք սպառած ջրի դիմաց» հարցին ենթաձրագրի տնային տնտեսությունների հարցման մասնակիցները հիմնականում տվել են «այո» պատասխան՝ 92.7%-ը, «ոչ»՝ 3.4%-ը, իսկ դժվարացել են պատասխանել 0.9%–ը:

«Ի՞նչ հաճախականությամբ եք վճարում ջրի վարձը» հարցի վերաբերյալ հավաքված կարծիքներն իրենց մեջ պարունակում են լավատեսություն, քանի որ նրանց 82.1%-ն է ամեն ամիս կատարում վճարումներ: Ընդհանրապես չվճարողների թիվը կազմել է 5.6%, դրանք հիմնականում այն տնտեսություններն են, որոնք չունեն խմելու ջուր և այն բերում են փողոցից, հասարակական աղբյուրներից, հարևանների մոտից կամ առնում են: Խմելու ջրի դիմաց անկանոն ձևով վճարումները կատարել են հարցվածների 12.4%-ը: Ըստ առանձին համայնքների հարցվածների պատասխանների, տվյալ հարցի հետազոտության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Ի՞նչ հաճախականությամբ եք վճարում ջրի վարձը

	Համայնք	Համայնքների հարցվածների ջրի վարձի վճարումը, տոկոսներով		
		ամսական	անկանոն	չեն վճարում
1	Լեռնամերձ	75.0	25.0	
2	Ամբերդ	63.6	36.4	
3	Այգեշատ	83.3	16.7	
4	Դաշտ	100.0		
5	Դոդոս	80.0	10.0	10.0
6	Շահումյան	84.6	15.4	
7	Շահումյան ԹՖ	88.9		11.1
8	Մուսալեռ	66.7	20.8	12.5
9	Նորակերտ	85.7	9.5	4.8
10	Աղավնատուն	83.3	12.5	4.2
11	Պտղունք	45.5	9.1	45.5
12	Ոսկեվազ	94.3	5.7	
13	Ոսկեհատ	76.9	23.1	
14	Օշական	90.9	6.1	3.0
Ընդհանուր ենթաձրագրում		82.1	12.4	5.6

1.9.2 Օգտագործված ջրի վարձի չափը


Վարձավճարների չափերի հետ կապված հարցի վերաբերյալ ամռան ամիսներին տնային տնտեսությունների հարցման մասնակիցների 24.4%-ի օգտագործած ջրի վարձը միջին ամսականում կազմել է մինչև 1000 դրամ, 35.5%-ի՝ 1001-2000դրամ, 18.4%-ի՝ 2001-3000 դրամ, 11.2%-ի՝ 3001-5000 դրամ, 2.6%-ի՝ 5000դրամից ավել: Ձմռան ամիսներին տնային տնտեսությունների հարցման մասնակիցների 26.5%-ի օգտագործած ջրի վարձը միջին ամսականում կազմել է մինչև 1000 դրամ, 33.3%-ի՝ 1001-2000դրամ, 20.5%-ի՝ 2001-3000 դրամ, 10.7% -ի՝ 3001-5000 դրամ, 0.9%-ի՝ 5000 դրամից ավել:

«Ամսական սպառած ջրի դիմաց որքա՞ն գումար եք վճարում» ամռան և ձմռան ամիսներին հարցին ենթաձրագրի տնային տնտեսությունների հարցման մասնակիցների պատասխանների հետազոտությունների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 11–ում, իսկ գրաֆիկական պատկերները կարելի է տեսնել Գրաֆիկ 3-ում և Գրաֆիկ 4-ում:


Աղյուսակ 11. Սպառված ջրի դիմաց վճարումները ամռան և ձմռան ամիսներին

	Վճարումները դրամով					չեն վճարում
	մինչև 1000	1000-2000	2001-3000	3001-4000	4000- ից ավել	
Ամռան ամիսներին	25%	36%	19%	6%	8%	6%
Ձմռան ամիսներին	27%	34%	21%	6%	6%	6%

Գրաֆիկ 3




Գրաֆիկ 4



Ջրամատակարարման ծառայությունների հետագա բարելավման դեպքում տնային տնտեսությունների 97.4%-ը նշել են. կվճարեն ըստ սահմանված վարձաչափի և ջրաչափի ցուցմունքի: Որքան գումար պատրաստ կլինեն վճարել հարցվողները ջրամատակարարման ծառայությունների բարելավման դեպքում կարելի է տեսնել Գրաֆիկ 5-ում:

Գրաֆիկ 5



Փաստորեն ինչպես երևում է պատկերներից, եթե ջրամատակարարման ծառայությունները բարելավվեն, ապա ջրի սպառման ծավալները և դրանց դիմաց վճարումները կավելանան: Գրաֆիկ 5-ում երևում է, որ չվճարողների խումբը վերացել է, ջրի սպառումն ավելացել, ինչի հաշվին պակասել է մինչև 1000 դրամ վճարողների խումբը, աճել է 1000-2000դրամ և 2000-3000դրամ վճարողների խմբերը:

1.9.3 Հանրային ծառայությունների համար վճարումները

«Ո՞ր ծառայությունների համար ավելի շատ եք վճարում» հարցի շրջանակներում ուսումնասիրվել են հարցման մասնակիցների տնային տնտեսություններում հանրային ծառայությունների համար կատարված վճարումները: Հետազոտության արդյունքներն ըստ ենթածրագրի հարցման մասնակիցների տնային տնտեսությունների գազի, էլեկտրաէներգիայի և խմելու ջրի վճարումների՝ ամռան և ձմռան ամիսների համար, ներկայացված են Աղյուսակ 12–ում: Կան տնային տնտեսություններ, որտեղ նույնիսկ գազի միացումների դեպքում ձմռան ամիսներին հիմնականում օգտվում են փայտի վառարաններից: Ենթածրագրի համայնքների տնային տնտեսությունների 32.5%-ը չունի գազամատակարարում: Հաշվի առնելով նաև որոշ համայնքներում և նրանց տնային տնտեսություններում գազամատակարարումների բացակայությունը կամ անվճարունակությունը, միևնույն է ենթածրագրի միջին ցուցանիշով գազի ծառայության դիմաց ձմռանն ավելի շատ է վճարվում:

Հարցման մասնակիցներից շատերը նշել են, որ խմելու ջուր չեն ստանում կամ շատ թույլ է գալիս: Միայն պոմպի միջոցով են ստանում այն, որի համար էլ էլեկտրաէներգիայի վարձն է ավելանում:

Աղյուսակ 12. Ո՞ր ծառայությունների համար ավելի շատ եք վճարում

Ենթածրագրի համայնքներում	Վճարումները ծառայությունների համար, 1-ը ամենաբարձրն է		
	1	2	3
Ամռան ամիսներին	Էլեկտրաէներգիա	Գազ	Խմելու ջուր
Ձմռան ամիսներին	Գազ	Էլեկտրաէներգիա	Խմելու ջուր

1.10 Օգտագործված ջրաքանակի հաշվառման համակարգի նկատմամբ վերաբերմունքը

Որպես վարձի վճարման հարմար եղանակ՝ տնային տնտեսությունների 97.4%-ը համարել են ջրաչափով ծախսած ջրի փաստացի ծավալի դիմաց վճարումը:

Ըստ հետազոտության արդյունքների, սպառողների 80.8%–ն ունի տեղադրված ջրաչափ կամ էլ գնել են ջրաչափ, բայց տեղադրված չէ, իսկ 18.4%-ը չունի ջրաչափ: Հարցվածներից 18.0%-ում, ովքեր չունեն ջրաչափեր, համակարգի բարելավման պայմաններում ցանկություն են հայտնել այն տեղադրել և պատրաստ են պարտաճանաչ կատարել անսական վճարումները, 1.3%-ը բացասական պատասխան է տվել այդ հարցին՝ ի վիճակի չլինելով գնել ջրաչափ, 0.4%-ը՝ դժվարացել են պատասխանել:

Բնակչության շրջանում այդ համակարգի նկատմամբ առկա դրական դիրքորոշումը կարող է խթանել ծրագրի տարածքում այդ համակարգի ամբողջական ներդրմանը:

1.11 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավմանն ու աջակցությանն ուղղված գործունեությունից տեղեկացվածություն և համագործակցություն ՀՋԿ-ի հետ

1.11.1 ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների տեղեկացվածությունը սպասարկման բարելավման աջակցության գործունեությունից

Տնային տնտեսությունների հարցման մասնակիցների շրջանում ուսումնասիրություններ են անցկացվել բացահայտելու համար ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների տեղեկացվածությունը սպասարկման բարելավման և աջակցության գործունեությունից: Ուսումնասիրության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 13–ում: Միաժամանակ այդ հարցն ինքնին ապահովում էր տեղեկատվության տրամադրում բաժանորդներին:

Աղյուսակ 13. Տեղյակ եք արդյո՞ք ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավման և աջակցության գործունեությունից

ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավման և աջակցության գործունեություն	Այո	Ոչ
Բաժանորդների սպասարկման թեժ գծի 1-71 հեռախոսահամար	19.7%	80.3%
81-71 կարճ հաղորդագրության միջոցով ջրաչափի ցուցմունների փոխանցման նոր տարբերակ	11.5%	88.5%
armwater.am ինտերնետային կայք	9.8%	90.2%

1.11.2 Համագործակցություն ՀՋԿ ՓԲԸ-ի հետ

Հարցման մասնակիցների ներկայացրած տվյալներով 17.5%–ը համագործակցում են ՀՋԿ ՓԲԸ–ի հետ: Ընդ որում նրանց 64.3%-ն ահազանգում է վթարների վերաբերյալ, 31.0%-ն ահազանգում է մատակարարավող ջրի ճնշման անկման և որակի վատթարացման մասին, իսկ 2.4%-ը սպառած ջրաքանակի մասին տեղեկացնում է կարճ հաղորդագրության կամ ինտերնետային կայքի միջոցով:

ՀՋԿ աշխատակիցների հետ տնային տնտեսությունների համագործակցության ուսումնասիրության արդյունքները՝ ենթաժողովի հարցման մասնակիցների շրջանում, ներկայացված է Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Համագործակցությունը ՀՋԿ-ի հետ

Ահազանգում են վթարների վերաբերյալ	Սպառած ջրաքանակի մասին տեղեկացնում են կարճ հաղորդագրության կամ ինտերնետային կայքի միջոցով	Ահազանգում են մատակարարավող ջրի ճնշման անկման, որակի վատթարացման մասին
11.5%	0.4%	5.6%

Հարցման մասնակիցների 89.3%-ը նշել են, որ չեն համագործակցում ՀՋԿ-ի հետ: Կցանկանայիք համագործակցել հետագայում հարցի պատասխանները ընդգրկված են Աղյուսակ 15–ում:

Աղյուսակ 15. Կցանկանայի՞ք համագործակցել հետագայում

	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
Կցանկանայի՞ք համագործակցել հետագայում	32.5%	24.8%	32.1%

Տվյալ հարցի վերաբերյալ հարցման մասնակիցների կողմից ներկայացված պատասխանները հուսադրող են:

Նշված կարծիքները կարող են պիտանի լինել ՀՋԿի հետ բաժանորդների համագործակցության զարգացման և տարածքի ջրամատակարարման նախագծերի մշակման ժամանակ:

1.12 Սոցիոլոգիական գենդերային հարցումների վերլուծության արդյունքները

Սոցիոլոգիական գենդերային հարցումների վերլուծության արդյունքում առանձնացվել են մի շարք հիմնախնդիրներ, որոնց պարզաբանման վերաբերյալ հանրային իրազեկման արշավի ընթացքում կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Հիմնախնդիրները հետևյալն են.

- Ջրամատակարարման տևողություն և խափանումներ
- Ջրամատակարարման վարձավճար
- Ջրի որակ և անվտանգ ջրամատակարարում
- ՀՋԿ ՓԲԸ-ի հետ համագործակցության ոչ բավարար մակարդակ:

Հավելված 1. Սոցիոլոգիական հարցման ստուգաթերթիկ Social survey checklist

1. Հարցվողի բնակության վայրը՝ մարզ, քաղաք/ գյուղ Place of respondent's residence –marz, town/village							
2. Հարցվողի անձնական տվյալներ Personal data of the respondent							
2.1 Հարցվողի անուն ազգանուն Full name of the respondent							
2.2 Հարցվողի սեռը Sex of the respondent		Արական Male		Իգական Female			
2.3 Հարցվողի տարիքը Age of the respondent		18-25	26-40	41-60	61-ից բարձր, more than 61		
2.4 Ընտանիքի անդամների քանակը Number of family members		1-2	3-4	5-6	ավելի more than 7		
2.5 Ընտանիքում անդամների քանակը ըստ սեռի Family members by gender		Կին Female		Տղամարդ Male		Երեխա Child	
2.6. Հարցվողի զբաղվածության բնույթը Respondent's type of employment							
Պետական/ Համայնքային համակարգի աշխատող State/ Community employee		Մասնավոր գործնություն Private entrepreneur		Գյուղատնտեսություն Agriculture		Տնային տնտեսուհի Housewife	
						Այլ /Other	
3. Ընտանիքի եկամտի աղբյուրը Family income source							
Վարձատրություն Remuneration		Եկամուտ մասնավոր գործունեությունից/գյուղատնտեսությունից Income from private activity/agriculture		Թոշակ/ նպաստ Pension/ social benefits		Արտագնա աշխատանք go off in search of a living	
						Այլ /Other	
4. Ընտանիքի մոտավոր եկամուտը / ՀՀ դրամ Approximate family income / AMD							
մինչև 32 000 Up to 32 000		33 000-50 000		51 000-100 000		100 000-ից բարձր More than 100 000	
5. Ապահովված եք արդյո՞ք խմելու ջրով Are you provided with drinking water ?							
Այո/ Yes		Ոչ /No		Մասամբ/partially			
6. Ինչ՞ նպատակով եք հիմնականում օգտագործում խմելու ջուրը What is the main purpose of using drinking water?							
Խմելու և խոհանոցի Drinking		Կենցաղային կարիքների household needs		Ոռոգման Irrigation		Անասնապահության animal husbandry	
						Այլ/Other	
7. Հիմնականում խմելու ջրամատակարարման ո՞ր ձևից եք օգտվում							

Mainly what form of drinking water supply do you use?					
Տնային ծորակ In-house tap	Բակային ծորակ In-yard tap	Փողոցային ծորակ Public tap	Սեփական ջրհոր Bore well of public use	Հասարակական ջրհոր/աղբյուր Public borewell/spring	Ջուրը գնում եմ Purchase of water
8. Սիջին օրեկան ջրամատակարարման տևողությունը Average daily water supply duration					
8.1 Ամառային ամիսներին Summer	0 – 4 ժամ hour	5 – 11 ժամ hour	12 – 23 ժամ hour	24 ժամ hour	Այլ /Other
8.2 Ձմեռային ամիսներին Winter					
9. Արդյո՞ք Ձեզ բավարարում են ջրամատակարարման ժամերն ու տևողությունը Are you satisfied with water supply hours and duration?					
9.1 Ամառային ամիսներին Summer	Այո/ Yes	Ոչ /No	Դժվարանում եմ պատասխանել Difficult to answer		
9.2 Ձմեռային ամիսներին Winter	Այո/ Yes	Ոչ /No	Դժվարանում եմ պատասխանել Difficult to answer		
10. Անհրաժեշտության դեպքում ՏՏ-ում ովքե՞ր են ջուր կրում /Who brings water if required					
Կանայք / Women	Տղամարդիկ / Men	Երեխաները / Children	Բոլորը / Everybody		
11. Մոտավորապես որքա՞ն հեռավարությունից է հարկ եղած դեպքում ջուրը բերվում / What is the distance of the source of brought water					
Մինչև 50մ Up to 50m	50-100մ/m	100-150մ/m	150-200մ/m	200-250մ/m	Այլ /Other
12. Վճարում եք արդյո՞ք սպառած ջրի դիմաց Do you pay for consumed water?					
Այո/ Yes	Ոչ /No		Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer		
13. Սպառած ջրի դիմաց միջինում ամսական որքան գումար եք վճարում – ՀՀ դրամ How much do you pay per month for consumed water?					
Ամառային ամիսներին Summer			Ձմեռային ամիսներին Winter		
14. Ինչ հաճախականությամբ եք վճարում ջրի վարձը What is the frequency of paying water bill?					
Ամսական / Per month		Անկանոն/ Irregularly		Չեմ վճարում/ I do not pay	
15. Ջրամատակարարման ծառայությունների բարելավման դեպքում ամսական որքա՞ն եք պատրաստ վճարել – ՀՀ դրամ How much are you ready to pay in case of improving water supply services/AMD?					
_____ ՀՀ դրամ/AMD					
16. Տեղյակ եք արդյո՞ք ՀՋԿ ՓԲԸ բաժանորդների սպասարկման բարելավմանն և աջակցությանն ուղղված գործունեությունից Are you informed on the AWSC activities directed at improvement and support provided to the customers?					
Բաժանորդների սպասարկման թեժ գծի 1-71 հեռախոսահամար/ Customers service hot line 1-71		81-71 կարճ հաղորդագրության միջոցով ջրաչափի ցուցմունքների փոխանցման նոր տարբերակ/ New option on providing water meter readings through the message 81- 71		armwater.am ինտերնետային կայք/ armwater.am web site	

Այո/ Yes		Ոչ /No		Այո/ Yes		Ոչ /No		Այո/ Yes		Ոչ /No	
17. Արդյո՞ք համագործակցում եք ՀՋԿ-ի հետ Do you cooperate with AWSC?											
Եթե Այո, ապա նշեք ստորև բերված տարբերակներից մեկը If Yes, mention one of the following options						Եթե ոչ, ապա կցանկանալի՞ք համագործակցել հետագայում If No, are you willing to cooperate in the future ?					
Ահազանգում եք վթարների վերաբերյալ/ Informign about accidents		Սպառած ջրաքանակի մասին տեղեկացնում եք կարճ հաղորդագրության կամ ինտերնետային կայքի միջոցով/ Informing on consumed water through message or website		Ահազանգում եք մատակարարվող ջրի ճնշման անկման, որակի վատթարացման մասին/ Informing about pressure fall of supplied water, quality decrease		Այո/ Yes Ոչ, պատճառը/ No, the reason Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer					
18*. Սովորաբար, ՏՏ-ում ով է ահազանգում ջրի հետ կապված խնդիրների վերաբերյալ / Who alarms on the water issues in the household?											
Կանայք/ Women				Տղամարդիկ/ Men				Այլ /Other			
19. Ունե՞ք արդյոք ջրաչափ Do you have a water meter installed?											
Այո/Yes						Ոչ /No					
20. Ծառայությունների բարելավման դեպքում պատրաստ եք տեղադրել ջրաչափ և պարտաճանաչ կատարել ամսական վճարումները Are you ready to install water meter in case of improving water supply services and pay regularly?											
Այո/Yes				Ոչ /No				Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer			
21. Արդյո՞ք Ձեզ բավարարում է ջրամատակարարման ծառայության որակը / Are you satisfied with water services provided?											
Այո/Yes				Ոչ /No				Դժվարանում եմ պատասխանել / Difficult to answer			
22.Արդյո՞ք Ձեզ բավարարում է մատակարարվող ջրի որակը Are you satisfied with supplied water quality?											
Դասակարգել 1-5, որտեղ 1-ն ամենացածր, իսկ 5-ն ամենաբարձր ցուցանիշն է Classify 1-5, where 1is poorest and 5is the best water quality criteria				[]		Դժվարանում եմ պատասխանել/ Difficult to answer				[]	
23.Վերջին տարիներին Ձեր ընտանիքում եղել են արդյո՞ք ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների գրանցման դեպքեր Have any cases of water borne diseases been reported over the last years?											
Այո/Yes				Ոչ /No				Դժվարանում եմ պատասխանել / Difficult to answer			
24. Ո՞ր ծառայության համար ավելի շատ եք վճարում What are the services you pay more?											
Բնական գազ Natural gas				Էլեկտրաէներգիա Electricity				Ջուր Water			
25**. Արդյո՞ք միացած եք կենտրոնացված կոյուղու համակարգին Are you provided with centralized sewerage system?											
Այո/Yes				Ոչ /No				Մասամբ/ partially			
26. Ինչ տիպի զուգարանից եք օգտվում / What type of lavatory do you use?											
Շիթով զուգարան բնակարանի ներսում Flash toilet in the flat				Բակային չոր զուգարան/ Yard toilet				Այլ /Other			

--	--	--

Հավելված 2. Նկարներ սոցիոլոգիական և գեներային հարցումների, քննարկումների

